

ЕРЕВАНСКИЙ
ГОСУДАРСТВЕННЫЙ
УНИВЕРСИТЕТ



YEREVAN STATE
UNIVERSITY

ФАКУЛЬТЕТ АРМЯНСКОЙ
ФИЛОЛОГИИ

FACULTY OF
ARMENIAN
PHILOLOGY

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ՀՀ Երևան, 0025, Արշակունյաց 52* • Республика Армения, Ереван, 0025, Абовяна 52* • 52* Abovyan, 0025, Yerevan, Republic of Armenia
(+374 10) 54-43-91/94,95,96/1-37, armphilology@ysu.am, www.yso.am



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ԳԱՌԱՎԱՐԻՉ-ՌԵԿՏՈՐ, ՊԱՏՄԱԿԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՈԿՏՈՐ
ՀՈՎՀԱՆՆԵՍ ՎԱՀԱԳՆԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

20. 05. 2024 թ.

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔ

ՀԱՍՄԻԿ ԳԱԳԻԿԻ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ՝

«ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՇՏՈՅԻ ԱՆՎԱՆ
ՄԱՏԵՆԱԴՆԱՐԱՆԻ ՁԵՌԱԳՐԵՐՈՒՄ»

ԹԵԿՆԱԾՈՒԱԿԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևանի պետական համալսարանի ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնի՝ 2024 թ. մայիսի 20-ին կայացած թիվ 7 նիստին մասնակցում էին ամբիոնի վարիչ, ք. գ. դ., պրոֆ. Ալ. Մակարյանը, ք. գ. դ., պրոֆ. Ս. Մուրադյանը, ք. գ. դ., պրոֆ. Վ. Սաֆարյանը, ք. գ. թ. դոցենտներ

Ս. Սրապիոնյանը, Վ. Եղիազարյանը, Վ. Ավագյանը, Ա. Ջրբաշյանը, Ա. Բեքմեզյանը և Ն. Վարդանյանը (արձանագրություն թիվ 5):

ԼՍԵՑԻՆ - Հասմիկ Գագիկի Հովսեփյանի՝ «Գրիգոր Մագիստրոսի ստեղծագործությունները Մաշտոցի անվան մատենադարանի ձեռագրերում» թեկնածուական ատենախոսությունը ՀՀ ԳԱԱ Ս. Աբեղյանի անվան գրականագիտության ինստիտուտում գործող՝ ԲԿԳԿ-ի գրականագիտության 003 մասնագիտական խորհրդում պաշտպանության երաշխավորելու հարցը՝ Ժ. 01. 01 - «Հայ միջնադարյան և նոր գրականություն» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցելու համար:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ամբիոնի վարիչ, բ. գ. դ., պրոֆ. Ալ. Մակարյանը, բ. գ. դ., պրոֆ. Ս. Սուրադյանը, բ. գ. դ., պրոֆ. Վ. Սաֆարյանը, բ. գ. թ. դոցենտներ Ս. Սրապիոնյանը, Վ. Եղիազարյանը, Վ. Ավագյանը, Ա. Ջրբաշյանը, Ա. Բեքմեզյանը և Ն. Վարդանյանը:

Ելույթ ունեցողները նշեցին, որ Գրիգոր Մագիստրոսը հայոց պատմության բարդագույն ժամանակներում (11-րդ դար՝ հայոց պետականության և Բագրատունյաց Անի մայրաքաղաքի կործանում) հանդես եկած գործիչ էր, որի ռազմաքաղաքական և գրական-մշակութային գործունեությունը ևս բարդ և պարզաբանման կարոտ էջեր ունի: Ատենախոսությունը Գր. Մագիստրոսի ձեռագրերի բանասիրական-աղբյուրագիտական, տեսական ու բովանդակային քննությամբ կարևոր քայլ է հենց այդ առումով, և դա էլ պայմանավորում է աշխատանքի գիտական արդիական նշանակությունը: Մկզբնաղբյուրի արժեք ունեցող ողջ աշխատանքն է գնահատելի, քանի որ նրա արդյունքներն ամփոփված են ոչ միայն եզրակացություններում, այլև ներածության մեջ և երեք զլուխներում:

Ներածության մեջ արդեն նկատելի են հայցորդի աղբյուրագիտական քաջիմացությունը, գիտական բարեխղճությունն ու նպատակասլացությունը, ուսումնասիրության նյութին կատարելապես տիրապետելու իրողությունը, որոնցով ապահովվել են աշխատանքի կուռ կառուցվածքը և իրականացվել թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող մյուս պահանջների բավարարումը: Այսպիսի հաջողության Հասմիկ Հակոբյանը հասել է Գր. Մագիստրոսի՝ Մատենադարանում պահվող ձեռագրերի և թեմային առնչվող հարակից նյութերի հանգամանալից ուսումնասիրությամբ:

Դրա հիմնավոր հաստատումն է **առաջին գլուխը** («Գրիգոր Մագիստրոսի գրական բարդ լեզվի բանասիրական քննությունը. հեղինակի երկերի շրջանատման, ժանրային գնահատության, ստեղծագործական եղանակի ընտրության հարցեր»), որտեղ չորս ենթագլուխների մեջ ծնվում են Գր. Մագիստրոսի բարդ լեզվի, նրա երկերի ձեռագրային ընդօրինակումների և շրջանառելի ստեղծագործական վերաբերմունքի և ժանրային գնահատման հարցերը: Մոտ 60 էջ կազմող այս գլուխը բանասիրական-աղբյուրագիտական համակողմանիությամբ ամենից արժեքավորն է: Վերլուծվում են ձեռագրային տարբերակները, համեմատությամբ՝ որոշ երկերի ձեռագրերի մեծ քանակի պատճառները, ընդօրինակումների վայրը, ժամանակը, հեղինակը և այս ամենի հետ կապված տարբեր հարցերի պատճառաբանումները՝ հայ և օտարալեզու կողմնակի գրականության դիպուկ վկայակոչումներով: Բնականաբար այս խնդիրներին համադրվում են Մագիստրոսի ապրած ժամանակի նշանավոր դեմքերի, նրանց հետ ունեցած կապերի հարցերը:

Հարկ եղած դեպքում կատարվում են պատմաբանասիրական ճշգրտումներ: Օրինակ՝ Շապուհ կրոնավորին գրած թուղթը՝ որպես պատասխան, նրանում կրոնաեկեղեցական խնդիրը, չափածոյացված հատվածի և խրթնաբանության պատճառը բացատրելուց զատ ատենախոսը կատարում է թարգմանություն (էջ 33-42), նաև մեկնաբանության մեջ հուշում. «... բնագիրը հիմնովին յուրացնելու բանալին Հորի գիրքն է» (էջ 42): Իսկ «հեղզ» աշակերտներին ուղղված թուղթը նույն հիմունքներով վերլուծելուց

հետո դիտարկվում է, թե «Մագիստրոսը փաստում է, որ ... հունական դպրոցի առաջատար փիլիսոփաների հետևորդներից է» (էջ 47):

Բանասիրական նման ընդգրկումների կողքին, որով բնութագրվում են ատենախոսության բոլոր գլուխներն ու ենթագլուխները, նույնքան ընդգրկուն և ընդգծված չեն մշակութաբանական ընդհանրացումները: Այսպես՝ առաջին գլխի երրորդ ենթագլխում «Հագարտողեան»-ի ժանրի հարցը քննելիս նշվում են ձեռագրային տարբերակներում եղած բնորոշիչները՝ «Տաղասացութիւն...», «... ոտանաւոր բանք...», «տաղ ասացեալ...» և այլն, եզրակացվում է, որ «միջնադարյան ըմբռնմամբ Մագիստրոսի այս չափածո ստեղծագործությունը տաղ է» (էջ 58), ուրեմն այո՞ւմ չպետք է համարել: Իսկ «ծավալուն լինելը պայմանավորված է արծարծված թեմայի ընտրությամբ՝ սուրբգրային հիմնական դրվագների և քաղվածքների անհրաժեշտ առատությամբ» (էջ 62): «Հագարտողեան»-ի գրության առիթն ու բովանդակությունը կարող էին ավելի հստակեցնել ժանրի բնութագիրը՝ նաև անխուսափելի արդիական պատկերացումներով և դրա ու այլ հարցերի հետ կապված մշակութային տեղաշարժերի հստակեցմամբ:

Նույն ձեռագրագիտական ու աղբյուրագիտական մեծ ընդգրկումներով խոսելով Մագիստրոսի քերականական դասագրքի մասին՝ նշվում է, որ «Մագիստրոսն առաջ է քաշում ճկուն մտածողությամբ, բանիմաց, զարգացած, գիտելիքների լայն պաշարով ընթերցող հանրություն ձևավորելու ծրագիրը» (էջ 62), որտեղ զգալի է Աստվածաշնչի Առակաց գրքի («Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ...») դերը, միաժամանակ «հույն քերական Դիոնիսիոս Թրակացու արվեստը» (էջ 63): Մնում է հստակեցնել երկաստիճան ուսումնական համակարգի մասին Գրիգոր Մագիստրոսի ծրագիրը:

Այսպես՝ հիմնավոր մշակութաբանական ընդհանրացում անելու առումով խոսուն է նաև ատենախոսության **երկրորդ գլուխը**՝ «Գրիգոր Մագիստրոսի թղթերի առնչությունները հունական և հայկական դիցաբանությանը, հնախոսությանն ու ժողովրդական բանահյուսությանը» վերնագրով: Այստեղ Թոմնիկ Մամիկոնյանին և Սյունյաց Հովհաննես արքեպիսկոպոսին ուղղված թղթերի իմաստասիրական բովանդակության վերլուծումները կրկին արվում են խնդրին առնչվող կողմնակի գրականութ-

յան հարուստ ներառումներով՝ ձկների, կաղնու, խնձորենու, նժույզների մասին կողմնակի փաստարկումներով, օրինակ՝ «Սողոմոնյան խնձորները» Օննդոց գրքի, Երգ երգոցի, նաև Ղևոնդ Ալիշանի «Հայրուսակ»-ի, ինչպես և «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» մեջ: Արվում է ճիշտ եզրակացություն այն մասին, որ այս թղթերը «խոսում են հին աշխարհի պաշտամունքային առարկաների վերաբերյալ Մագիստրոսի հետաքրքրության, երևակայության և խորը գիտելիքների մասին, որոնք սնվում են Աստվածաշնչից, հունական դիցաբանությունից» (էջ 95), նաև հայկական հնախոսությունից: Այս ամենը հաստատվում է բովանդակասյուժետային հիմնավոր վերապատմումներով: *Մնում էր կատարել մշակութաբանական եզրահանգումը՝ կապված Հայկական Վերածննդի հետ:* Նույն կերպ թղթերում առակների ներառումների մասին խոսելիս կարելի էր ընդհանրացնել ժանրային ինքնուրույնության առումով գրավոր խոսքում առակի-արձակի սկզբնավորման փաստը:

Թղթերի գեղարվեստական ինչ-ինչ առանձնահատկությունների մասին ավելի որոշակի խոսվում է **երրորդ գլխում**՝ «... Բագրատունիների հայոց թագավորության մասին թղթերը», որոնցում բնականորեն գերիշխելու է պատմական դիտարկումը՝ թագավորության անկման, հայերի մեջ հունակողմության, այս ամենի հետ Մագիստրոսի առնչության փաստերով: Ե՛վ Պետրոս Գետադարձ կաթողիկոսին, և՛ Գագիկ Բ թագավորին ուղղված թղթերը բացում են նաև Մագիստրոսի ապրումները, հոգեբանական վիճակն ու անցումները, «ներկայացվում են մագիստրոսյան հուսահատ մտորումները, ներքին ապրումներն իր հանդեպ եղած անարդար վերաբերմունքի համար» (էջ 122), ինչն արդեն ժանրի գեղարվեստականության հաստատումն է, որ արվում է ճիշտ եզրահանգմամբ. «Մագիստրոսի խոսքը դիպուկ է, հարուստ պատկերային մտածողությամբ, համեմատություններով» (էջ 116, օրինակ, Բագրատունյաց թագավորությունը փրկելու իր ճիգերը համեմատում է երկինքը անգոր ոտքերով պահել ցանկացող արտույտի ջանքերի հետ):

Գեղարվեստական մի այլ որակ է այն, որ թղթերում «կան հատվածներ, որոնք ողբի ժանրի յուրահատուկ դրսևորումներ են» (էջ 123), ինչպես, օրինակ, «Ո՞ր է...»

կրկնվող հարցի միջոցով անցյալի հերոսների ու փառքի և ներկայի անկումների հակադրությունը:

Այսպիսով՝ աշխատանքը փաստական, աղբյուրագիտական հարուստ նյութի, բանասիրական հարցադրումների ու կատարումների մեջ ներկայացնում է Գրիգոր Մագիստրոսի երկերի ձեռագրական ամբողջությունը, բովանդակային ընդգրկումները՝ տեղային եզրահանգումներով: *Միակ դիտարկումը կարող է լինել այն, որ չի արվել մշակութաբանական մեծ ընդհանրացումը վերլուծված երևույթների մեջ Վերածննդի տարրերի (հատկանիշների) առկայության մասին* (Աբեղյանը հայկական Վերածննդի սկզբնավորումը կապում էր Մագիստրոսի անվան հետ՝ Նարեկացուն համարելով Վերածննդի նախակարապետ):

Ատենախոսության մեջ դիտարկված են Գրիգոր Մագիստրոսի հանրագիտակությունը, անտիկ մշակույթի նկատմամբ հակումն ու խորիմացությունը. *կարելի էր ավելի շեշտել և ընդհանրացնել բնության, պատմության ու կենցաղի հանրագիտակ ներառումները, բանավեճը՝ որպես ճշմարտության հաստատում և իր հանրագիտակության հաղթանակի («Հազարտողեանի»-ի ծնունդը ևս կապվում է դրա հետ) ցուցադրումը, ժանրային որոշ տեսակների հստակեցումը, որոնք ակնհայտորեն վերածննդին բնորոշ երևույթներ են:*

Հ. Գ. Հակոբյանի ատենախոսությունն իր բովանդակային հարստությամբ, հարցադրումների արդիականությամբ և գիտատեսական մակարդակով լիուլի բավարարում է նման աշխատանքներին ներկայացվող պահանջները: Իսկ սեղմագիրն արտացոլում է ատենախոսության հիմնադրությունները:

ՈՐՈՇԵՑԻՆ - Հասմիկ Գագիկի Հովսեփյանի «Գրիգոր Մագիստրոսի ստեղծագործությունները Մաշտոցի անվան մատենադարանի ձեռագրերում» թեկնածուական ատենախոսությունը շարադրված է գրականագիտական պատշաճ մակարդակով: Առաջադիր խնդիրներն ու նպատակը ներկայացված են գրականագիտական մտքի արդի պահանջների համապատկերում: Այն համապատասխանում է ՀՀ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի պա-

հանջներին, Ժ. 01.01 - «Հայ միջնադարյան և նոր գրականություն» մասնագիտությամբ թվանիշին, և հեղինակն արժանի է իր հայցած՝ քանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:


Առաջատար կազմակերպության այս կարծիքը բաց քվեարկությամբ ընդունվել է միաձայն:

ԱԿԱԴ. ՀՐ. ԹԱՄԲԱԶՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ

ԱՍԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ՝



ԱԼԲԵՐՏ ԱՐՇԱՎԻՐԻ ՄԱԿԱՐՅԱՆ

բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Հաստատում եմ պրոֆեսոր Ալ. Ա. Մակարյանի ստորագրությունը:

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԵՄԱԼՍԱՐԱՆԻ

ԳԻՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒԴԱՐ՝



ՄԵՐԻ ՎԱԶԳԵՆԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

բան. գիտ. թեկնածու